ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 02 նոյեմբերի 2018թ.

Սույն թվականի նոյեմբերի 2-ին ժամը 9.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրաված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ին:
- Առաջարկել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ին հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և

անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

հանձնաժողովի նախագահ՝	Ա. Հ. Ապրոյան
հանձնաժողովի անդամ՝	Ն. Ա. Կուտուզյան
հանձնաժողովի անդամ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձնաժողովի անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձնաժողովի անդամ՝	Ս. Պ. Կարապետյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան